



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով կատարված փոփոխությունները,

ելնելով որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը ընդունելու անհրաժեշտությունից,

ղեկավարելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 11-րդ ենթակետի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 12-րդ ենթակետի,

Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- Հաստատել որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

13 հունվարի 2023թ.
թիվ 2/3-Լ
ք. Երևան